ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՐԱՄԱՆ

04 Մայիսի 2021 թվականի N ԱԿ 439 - Ա

ՎԵՐԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 39-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերը և Վերա Արմենի Ավետիսյանի 2021 թվականի ապրիլի 30-ի անձնական դիմումը.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Վերա Արմենի Ավետիսյանին 2021 թվականի մայիսի 06-ին նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության բաժնի գլխավոր տեսուչի (ծածկագիր՝ 66-27.10-Մ2-7) պաշտոնին՝ 9 ամիս փորձաշրջանով:

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

2. Վերա Արմենի Ավետիսյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 66-27.4-Մ2-5) Էդիտա Ֆահրադյանին:

3. Վերա Արմենի Ավետիսյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Recoverable Signature

X

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Signed by: AVAGYAN HAKOB 3912770166

Հ. ԱՎԱԳՅԱՆ

2021թ. Մայիսի 04
Երևան

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107